ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2022 թվականի մարտի 10-ին կնքված N ՀՌՀ-ՄԱԱՊՁԲ-22/13 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «21» մարտի 2022 թ.

«Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով»-ը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Խաչատրյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Օֆիս Պրո» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2022 թվականի մարտի 10-ին կնքված N «ՀՌՀ-ՄԱԱՊՁԲ-22/13» գնման պայմանագրի՝ այսուհետ «Պայմանագիր» 3.1, 3.2 և 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին.

1.1 Կատարել փոփոխություն Պայմանագրի հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում՝ «Ֆլիպչարտի թուղթ» 2-րդ չափաբաժնի չափման միավոր «հատ»-ը փոխարինել «կիլոգրամ»-ով:

1.2 Հաստատել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելված 1-ի (կցվում է):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ մնում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է **2 (երկու)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ք. Երևան, Իսահակյան 28 ՀՀ ՖՆ գործառական վարչություն Հ/Հ 900011057016 ՀՎՀՀ 02556422 ---------- (ստորագրություն) Կ.Տ	«Օֆիս Պրո» ՍՊԸ Իրավ. հասցե՝ ք. Երևան, Միկոյան 9, բն. 19 Գործ. հասցե՝ ք. Երևան, Շոպրոնի 21 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 2050022192491001 ՀՎՀՀ 00861435 ---------- (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
« 21 » մարտի 2022 թ. կնքված
«ՀՌՀ-ՄԱԱՊՁԲ-22/13» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատակարարման	
									Ենթակա քանակը	Ժամկետը
2	30197621/3	Ֆլիպչարտի թուղթ	Ռուսաստան	Թուղթ ֆլիպչարտ գրատախտակի համար, 20 էջ, չափը 960 x 640 մմ, խտությունը 80 գր., սպիտակ	կգ	2250	11250	5	5	Ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվում սույն պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը: Հասցե՝ ք. Երևան, Իսահակյան 28:

**Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի25-ը:*

ԳՆՈՐԴ

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողով
ք. Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն
Հ/Հ 90001057016
ՀՎՀՀ 02556422

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Օֆիս Պրո» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Միկոյան 9, բն. 19
Գործ. հասցե՝ ք. Երևան, Շուկայի 21
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500221924910001
ՀՎՀՀ 00861435

(ստորագրություն)

Կ.Տ